

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Ս/թ մայիսի 3-ին (ապրիլ ամսվա փոխարեն) Տաթև համայնքում ՀՀ Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանը կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Ընդունելությանը ներկայացել է 37 քաղաքացի:

Դրամական օգնություն ստանալու խնդրանքով դիմել էր տասնհինգ, աշխատանքի տեղավորման՝ չորս, բնակարանով ապահովելու՝ երկու, տանիքի վերանորոգման՝ երկու, բնակելի շենքի վերանորոգման, կացարանի սեփականաշնորհման, գրքի հրատարակման, վթարային շենքի համար փոխհատուցման, հողամասի հատկացման, ավտոտնակի սեփականաշնորհման, հողի սեփականաշնորհման, խարդախության բացահայտման, բիզնես-ֆորումին մասնակցության, Սվարանց գյուղի հիմնախնդիրների, Տանձատափ գյուղի ճանապարհի կարգավորման, Շինուհայր համայնքի մանկապարտեզի շենքի վերանորոգման, Տաթև համայնքի դպրոցի նորոգման, Խոտ գյուղի դպրոցի սանհանգույցի կարգավորման խնդրանքով՝ մեկական քաղաքացի:

Դրամական օգնության դիմումներից տասնչորսին տրվել է դրական լուծում, մեկ դիմում գտնվում է ուսումնասիրման փուլում:

Աշխատանքի տեղավորման մասին դիմումները վերցվել են հաշվառման, և ուսումնասիրվում են դրանց լուծման հնարավորությունները:

Մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումներում մարզպետի հանձնարարությամբ ուսումնասիրվում են բնակարանով ապահովելու, տանիքի վերանորոգման, բնակելի շենքի վերանորոգման, կացարանի սեփականաշնորհման, գրքի հրատարակման, վթարային շենքի փոխհատուցման, հողամասի հատկացման, ավտոտնակի սեփականաշնորհման, հողի սեփականաշնորհման, խարդախության բացահայտման, EXPO ֆորումի մասնակցության, Սվարանց գյուղի հիմնախնդիրների, Տանձատափ գյուղի ճանապարհի, Շինուհայր համայնքի մանկապարտեզի շենքի վերանորոգման, Տաթև համայնքի դպրոցի նորոգման, Խոտ գյուղի դպրոցի սանհանգույցի կարգավորման վերաբերյալ դիմումները:

ՀՀ Սյունիքի մարզպետարան